# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 16 )**

23 դեկտեմբերի 2016թ. ժամը՝ 15⁰⁰

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սաղմոսավանքի հայորդաց տան շինարարության համար ցեմենտի մատակարարում» ծրագրի մասին:
(Արմեն Գրիգորյան)

2. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագրի մասին:
(Հրահատ Ստեփանյան)

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին:
(Գևորգ Պապիկյան)

4. «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Կողբ համայնքում «Թումո» կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին:
(Մարի Լու Փափազյան)

5. «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասի:
(Կարո Գաբրիելյան)

6. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Երեխաների հովանավորության ծրագրի շրջանակներում նվերների փաթեթներ անհատ հովանավորներից» ծրագրի մասին:
(Մադլեն Մուրադյան)

7. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին:
(Միռա Անտոնյան)

## 8. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

8.1 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **N 1**:

8.2 «Փառապանծ մարտիկներ» ռազմահայրենասիրական միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

8.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 1**):



8.4 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 2**):

8.5 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 3**):

8.6 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 4**):

8.7 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

8.8 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:

8.9 «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

8.10 «Դիակոնիա» բարեգործական ~~հիմնադրամի հասցեով~~ ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

8.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):

8.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-928-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ավտոմեքենայի ներմուծման մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ):

## 9. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

9.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Այբ» կրթական հիմադրամ):

9.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

9.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-026-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

9.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի N Մ-620-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ):

9.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-930-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWR-Armenia)):

9.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

9.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N Մ-1058-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 3** («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

9.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

9.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացում կատարելու և նույն ծրագրին հարկից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

**10. Այլ հարցեր**

10.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1310-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին («Մայրի» հասարակական կազմակերպություն):

10.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1005-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը («Այբ» կրթական հիմադրամ):



10.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 14-ի N Մ-1094-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ):

10.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-930-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWR-Armenia)):

10.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 22-ի N Մ-690-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWR-Armenia)):

10.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի N Մ-330-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ):

10.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի N Մ-40-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին («Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ):

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**դեկտեմբերի 2016 թվականի N Մ- -Ա** ԺԲ 16/1
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԻ ՀԱՅՈՐԴԱՑ ՏԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՑԵՄԵՆՏԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի -ի N 07/80-2/-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի -ի N 02/14/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 7,800,000 դրամ արժողությամբ «Սաղմոսավանքի հայորդաց տան շինարարության համար ցեմենտի մատակարարում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2016 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 09 Գ/0 16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդ-ցեմենտի ձեռքբերում՝ 7,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«14» դեկտեմբեր 2016թ.
ԺԲ 16.

**Սաղմոսավանքի հայորդաց տան շինարարության համար ցեմենտի մատակարարում**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սաղմոսավանքի հայորդաց տան համար ցեմենտի մատակարարում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | ԵՀԽ Հայաստանյան կլոր սեղան: |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Արագածոտնի մարզ, Սաղմոսավանք համայնք, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 7,800,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Եկեղեցին, Սաղմոսավանք համայնքը, երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 դեկտեմբեր 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի ընթացքում նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սաղմոսավանքի հայորդաց տան համար ցեմենտի մատակարարում՝ 7,800,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սաղմոսավանքի հայորդաց տան համար ցեմենտի մատակարարում՝ 7,800,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am


Ol.1/80-2/23447-16
22.12.16թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
15.12.2016թ. N15/15.9/21180-16 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սաղմոսավանքի հայորդաց տան շինարարության համար ցեմենտի մատակարարում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նունե Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/40357-16
22.12.16թ

---


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303


06/3-2/39153-16
19.12.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 15.12.2016թ. թիվ 15/15.9/21180-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սաղմոսավանքի հայորդաց տան շինարարության համար ցեմենտի մատակարարում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՍՀԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/39706-16
19.12.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Դր. 16/1

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

22.12.16թ. N 02/14/17027-16

Ձեր N ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2016 թվականի դեկտեմբերի 15-ի 15/15.9/21180-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սաղմոսավանքի հայորդաց տան շինարարության համար ցեմենտի մատակարարում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Աստղիկ Վարդանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 26

035/39808-16
22.12.16թ.

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ դեկտեմբերի 2016 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

Դր. 16/2

## «ԱՌ-ԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԼՈՒՍԱՍՏՂԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի -ի N 01.1/80-2/-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի -ի N 06/3-8/-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի -ի N 02/14/-16 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի -ի N -16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 70,900,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի մարտի 26-ին կնքված՝ N 120630 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017-2021 թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 02108133738 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017-2021 թվականների ընթացքում բնական գազի մատակարարում՝ տարեկան 1,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2014 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017-2021

Դր. 16/2

թվականների ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2014 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված՝ N 113103564 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017-2021 թվականների ընթացքում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Հ. Ստեփանյանի կողմից

«12» դեկտեմբերի 2016թ.

**«Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 150 սաների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում: Մանկապարտեզի բոլոր ծախսերի (բացառությամբ աշխատավարձերի) ֆինանսավորում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի՝ սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 70,900,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գյումրու քաղաքապետարան: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագիրը շարունակական է: |

Դր. 16/2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | - սննդամթերքի և գրենական պիտույքների տրամադրում, կոմունալ ծառայությունների, բժշկական ու տնտեսական ծախսերի ֆինանսավորում՝ 64,400,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 12,880,000 դրամ<br>- աուդիտորական և չնախատեսված ծախսեր՝ 6,500,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 1,300,000 դրամ: |
| 10. | Ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - սննդամթերքի ձեռքբերում (կամ ներմուծում)՝ 51,000,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 10,200,000 դրամ,<br>- կոմունալ ծախսեր՝ 10,500,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 2,100,000 դրամ,<br>- տնտեսական և բժշկական ծախսեր՝ 1,850,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 370,000 դրամ,<br>- գրենական պիտույքներ՝ 1,050,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 210,000 դրամ,<br>-ծրագրի աուդիտի իրականացում՝ 3,000,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 600,000 դրամ,<br>- չնախատեսված ծախսեր՝ 3,500,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 700,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի աուդիտի իրականացում՝ 3,000,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 600,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան, Գյումրու քաղաքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով: |

Ն 16/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** Ն 16/2
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

N 01.1/80-2/28446-16
22.12.2016թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
15.12.2016թ. N 15/15.6/21154-16 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագրի մասին որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետում տարանջատել արտերկրից ներկրվող և հանրապետության ներսում ձեռքբերվող ապրանքների արժեքները միմյանցից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/40361-16
22.12.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ar. 16/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

N: 06/3-8/39018-16
19.12.2016թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 15.12.2016թ. թիվ 15/15.6/21154-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՍՀԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/39543-16
19.12.2016թ.

---

ar. 16/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

20.12.2016թ. N 02/14/17094-16

Ձեր N ____________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի 15/15.6/21154-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

**ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/39959-16
20.12.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

«19» 12 2016թ.
N: 01/7656-16

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

*Ձեր' 15.12.2016թ.*
*թիվ' 15/15.6/21154-16*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Մարզպետարանը ևս կարևորում և գնահատում է ծրագրի նշանակությունը և չի առարկում այն բարեգործական որակելուն:

Հարգանքով՝ Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

կատ Հ.Արշակյան
/0312 3-16-26/

116/39701-16
19.12.2016թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարություն դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| <u>Ընդհանուր առմամբ առարկություններ չունենք,</u> սակայն առաջարկում ենք վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրի 10րդ կետում տարանջատել արտերկրից ներկրվող և հանրապետության ներսում ձեռքբերվող ապրանքների արժեքները միմյանցից: | Հիմնադրամի կողմից ներկայացված պարզաբանումները կցվում են: |

ար.16/2

# «ԱՌԴԱ»

**բարեգործական հիմնադրամ** ՃՐ 16/2

ARMENIAN RELIEF AND DEVELOPMENT ASSOCIATION

Երևան, Պարույր Սևակ 9, հեռ. /010/20-94-22; 20-94-23

Կ-22/12 12 դեկտեմբերի 2016 թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

պատճենը՝ ՀՀ ֆինանսների նախարարի
առաջին տեղակալ
պարոն Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Տեր-Սիմոնյան.

Ի լրումն մեր 12.12.2016թ. N Կ-12/12 գրությամբ ներկայացված հայտի և ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2016թ. N 01.1/80-2/28446-16 գրությամբ արված առաջարկի, հայտնում ենք, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու Հաղթանակի զբոսայգու «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» շարունակական ծրագրի շրջանակներում սննդամթերքը, որպես կանոն, ձեռք է բերվում տեղում:

Սակայն, հաշվի առնելով կողմից ունենք խոստում, որ հնարավոր է ԱՄՆ-ից էլ սննդամթերք ուղարկվի, այդ պատճառով ծրագրում նախատեսել ենք նաև սննդամթերքի ներմուծման հնարավորությունը:

Քանի որ չգիտենք, թե ինչ սննդամթերք է ուղարկվելու (և ուղարկվելու է, թե՝ ոչ), ուստի անհնար է ներկայումս տարանջատել ներմուծվող սննդամթերքի ծավալները և արժեքները:

Հարգանքներով՝ Հրահատ Ստեփանյան
Գործադիր տնօրեն

094 - 40542
22 12 16

16 30

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**___ դեկտեմբերի 2016 թվականի N Մ - -Ա** ՃՐ 16/3
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի -ի N 01.1/80-2/-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի -ի N 06/3-8/-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի -ի N 02/14/-16, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի -ի N 1/06/-16 ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի -ի N -16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 1,374,047,370 դրամ ընդհանուր արժեքությամբ «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին::

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի Ֆեդերացիա» իրավաբանական [illegible] Ռ. Հայրապետյանի կողմից

«12» դեկտեմբերի 2016 թ.

«Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրո[illegible]ում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արմավիր մարզի տարածաշրջանում [illegible] ֆուտբոլի զարգացման և մասսայականացման նպատակով Վաղարշապատ քաղաքային համայնքի, Մարգարա խճուղի թիվ 12 հասցեում ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն – (UEFA-Շվեյցարիա, Նիոն) և Ֆուտբոլի ասոցացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Վաղարշապատ քաղաքային համայնքում, սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,374,047,370 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915)՝ ի դեմս Վաղարշապատ քաղաքային համայնքի, Մարգարա խճուղի թիվ 12 հասցեում կառուցվող Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Մարզադպրոցի կառուցման ընդհանուր շինարարական, տարածքի բարեկարգման և կահավորման աշխատանքներ՝ 504,753,750 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>2. Կաթսայատան, ջեռուցման, օդափոխության և անվտանգության համակարգերի նախագծման, կառուցման ու սարքավորումների մոնտաժման աշխատանքներ՝ 35,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>3. Լողավազանի հարդարման և սարքավորումների մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>4. Ոռոգման համակարգերի նախագծման և կառուցման աշխատանքների իրականացում՝ 31,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>5. Խորքային հորի կառուցման և պոմպի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 14,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>6. Մարզադպրոցի տարածքի ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>7. Խաղադաշտերի կառուցում՝ 146,293,620 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>8. Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 12,000,000 դրամ արժողությամբ. նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>9. Շինարարական նյութերի, ներքին հարդարման պարագաների, արտաքին լուսավորության սարքավորումների, լուսադիոդային ցուցատախտակի, մարզագույքի, մարզասարքերի, կահավորանքի, խաղադաշտերի խնամքի սարքավորումների, լողավազանի սարքավորումների և ախտահանիչ միջոցների, խոտի սերմի և պարարտանյութերի, արհեստական խոտածածկերի, ռետինե գնդիկների, արհեստական խոտածածկի մարզագույքի, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի, կվարցային ավազի ներմուծում՝ 601,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - մարզադպրոցի կառուցման շինարարական և ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 274,161,470 դրամ,<br>- ֆիլտրացիոն սարքավորումների տարածքի և պոմպակայանի շինարարական աշխատանքների իրականացում՝ 23,620,050 դրամ,<br>- տրիբունայի շինարարական աշխատանքների իրականացում՝ 17,968,900 դրամ,<br>- լողավազանի և օժանդակ կառույցի շինարարական աշխատանքների իրականացում՝ 53,423,010 դրամ,<br>- լողավազանի հարդարման և սարքավորումների մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ,<br>- տարածքի էլեկտրամատակարարման և արտաքին լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 7,268,520 դրամ,<br>- կաթսայատան, ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծման, կառուցման ու սարքավորումների մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 25,000,000 դրամ,<br>- անվտանգության համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 10,000,000 դրամ,<br>- պահակատան շինարարության, բարեկարգման, ցանկապատման և պարսպապատման աշխատանքների իրականացում՝ 118,451,670 դրամ,<br>- մարզադպրոցի կահավորման աշխատանքների իրականացում՝ 9,860,130 դրամ,<br>- մարզադպրոցի տարածքի ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ |

| | | |
|---|---|---|
| | | 15,000,000 դրամ,<br>- ոռոգման համակարգերի նախագծման և կառուցման աշխատանքների իրականացում` 31,000,000 դրամ,<br>- խորքային հորի կառուցման և պոմպի տեղադրման աշխատանքների իրականացում` 14,000,000 դրամ,<br>- երեք ստանդարտ չափսերի խաղադաշտերի շինարարական աշխատանքների իրականացում` 97,960,720 դրամ,<br>- մեկ արհեստական խոտածածկով խաղադաշտի հիմք դրենաժային համակարգի կառուցում` 48,332,900 դրամ,<br>- արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում` 20,000 եվրոյին համարժեք` 12,000,000 դրամ,<br>Շինանյութի և ներքին հարդարման պարագաների` 100,000,000 դրամ, արտաքին լուսավորության սարքավորումների` 150,000,000 դրամ, լուսադիոդային ցուցատախտակի` 62,000,000 դրամ, կահավորանքի` 50,000,000 դրամ, մարզագույքի` 8,000,000 դրամ, մարզասարքերի` 5,000,000 դրամ, խաղադաշտի խնամքի սարքավորումների` 25,000,000 դրամ, լողավազանի սարքավորումների և ախտահանիչ միջոցների` 40,000,000 դրամ, խոտի սերմի և պարարտանյութերի` 40,000,000 դրամ ներմուծում:<br>- խաղադաշտի արհեստական խոտածածկի (տեղադրման նյութերով և պարագաներով)` 116,000 եվրոյին համարժեք` 69,600,000 դրամ, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի` 11,000 եվրոյին համարժեք` 6,600,000 դրամ, մարզագույքի` 6,000 եվրոյին համարժեք` 3,600,000 դրամ ներմուծում. փոխադրման ծախսերը կկազմեն 12,000 եվրոյին համարժեք` 7,200,000 դրամ,<br>- արհեստական խոտածածկի ռետինե գնդիկների` 20,000 եվրոյին համարժեք` 12,000,000 դրամ ներմուծում. փոխադրման ծախսերը կկազմեն` 30,000 եվրոյին համարժեք` 18,000,000 դրամ,<br>- կվարցային ավազի` 8,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք` 4,000,000 դրամ ներմուծում. ներառյալ փոխադրման ծախսերը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կա[illegible]ան ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | [illegible]ագործակցությունը պետական [illegible], տեղական ինքնակառավարման [illegible] կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Վաղարշապատի քաղաքապետարանի հետ: |
| 13. | [illegible]ության նկատմամբ [illegible]անիզմների [illegible] | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ |

[illegible]գմեց` ֆ[illegible]անսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

դ-16/3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

№ 01.1/80-2/28454-16
22.12.2016թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
15.12.2016թ. N 15/15.6/21174-16 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437